ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«26» նոյեմբերի 2018 թվական N 117-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 6-ի N 23-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի դեկտեմբերի 10-ին Մայակովսկի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ:
2. Հաստատել Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ հաշվապահ՝ Աստղիկ Հարությունյանին:
4. Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանին՝
1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
2) համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել համայնքի 2019 թվականի բյուջեի նախագիծը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.նոյեմբերի 26

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայակովսկի համայնքի ղեկավարի
2018թ. նոյեմբերի 26-ի N 117-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Մայակովսկի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2018 թվականի նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ իրականացվող Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք Մայակովսկի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 8-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել ինտերնետային կայքում (mayakovski-Kotayq.am), հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով (mayakovsk .kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Մայակովսկի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում 2018 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 12.00-ին գ. Մայակովսկի 1-ին փող.8/1 հասցեում գտնվող Մայակովսկի համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 8-ը ներառյալ ներկայացնել դիմում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060 28 50 13 հեռախոսահամարով:

2019 թվականի բյուջեի նախագիծ

Մայակովսկի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2018 թվական N 118-Ա

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով,աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ***որոշում եմ***՝

1.Հաստատել Մայակովսկի համայնքի <<Աղետների ռիսկի կառավարման պլանը>> համաձայն 1-12 հավելվածների:

2.Սույն որեշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.նոյեմբերի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2018 թվական N 119-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը , Մայակովսկի համայնքի բնակիչ Արփենիկ Սիսակյանի դիմումը ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Արփենիկ Սիսակյանին տալ 20 000 /քսան հազար/ դրամ դրամական օգնություն.

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.նոյեմբերի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » նոյեմբերի 2018 թվական N 120-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ «ԼԱԳԳԱՍ » ՀՈԹԵԼ ՍՊԸ-ԻՆ ԺԱՄԸ 24-Ի Հ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետերով. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 962-Ն որոշման 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Գրիգոր Գրիգորյանի կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Գրիգոր Գրիգորյանին պատկանող Մայակովսկի համայնքի 1-ին փողոցի թիվ 2/6 հասցեում գտնվող << Լագգաս Հոթել >> ՍՊԸ-ի հյուրանոցային համալիրին 2018 թվականի համար տալ ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվություն :

2. Պարտավորեցնել Գրիգոր Գրիգորյանին , մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո' 3-օրյա ժամկետում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ